# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Հ Ր Ա Մ Ա Ն** № 203 ջ12 « 11 » նոյեմբերի 2015 թ.

## ԵՊՀ ԾԱՂԿԱՁՈՐԻ «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև աշխատողների և նրանց ընտանիքի անդամների հանգիստը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով,

Հրամայում եմ

1. 2015 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2016 թվականի հունվարի 6-ը ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում աշխատողների և նրանց ընտանիքների անդամների հանգստի կազմակերպման համար առաջարկել ամանորյա փաթեթ ըստ Հավելված 1-ի:
2. Փաթեթի ուղեգրերի բաշխումն ու տրամադրումը կազմակերպել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության միջոցով (համաձայն ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի 7.6 կետի):
3. Հանձնարարել ԵՊՀ գլխավոր հաշվապահին աշխատողներին տրամադրել ուղեգրերի վճարման համար փոխանցման հաշիվներ և ապահովել վճարումների հաշվառում:
4. Հանձնարարել ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայի տնօրենին ապահովել ուսումնաարտադրական բազա մեկնած աշխատողների և նրանց ընտանիքների անդամների հանգստի կազմակերպումը և ամանորյա փաթեթների շրջանակում նախատեսված ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝ Ա. Սիմոնյան

Համաձայն եմ՝

ԵՊՀ արհեստակցական կազմ. նախագահ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի ռեկտոր

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 1.
Երևանի պետական համալսարանի ռեկտորի
«11» նոյեմբերի 2016 թ. N 203Հ12 հրամանի

**ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում աշխատողների և նրանց ընտանիքների անդամների հանգստի անցկացման համար առաջարկվող ամանորյա փաթեթի նկարագրություն և փաթեթի ուղեգրերի արժեք**

*Փաթեթի ուղեգրերի հաշվարկ*

1. Փաթեթի տևողությունը՝ 7 օր, 6 գիշեր,
2. Փաթեթի ամսաթվեր՝ 31.12.2015 թ.-ից 06.01.2016 թ.-ը*,
3. Փաթեթի ուղեգրի արժեքը մեկ անձի համար՝ 100.000 դրամ,
4. Փաթեթի ուղեգրի արժեքը 3-12 տարեկան մեկ երեխայի համար՝ 50.000 դրամ**,
5. Փաթեթի ուղեգրի արժեքը մինչև 3 տարեկան մեկ երեխայի համար՝ անվճար առանց լրացուցիչ տեղ (ծալովի մահճակալ) տրամադրելու**,
6. Լրացուցիչ տեղ (ծալովի մահճակալ) տրամադրելու համար՝ 50.000 դրամ:

*Փաթեթում ներառված ծառայություններ*

1. Երեք անգամյա սնունդ (նախաճաշ, ճաշ, ընթրիք),
2. Ամանորյա ընթրիք և տոնական միջոցառում (շոու),
3. Անվճար WIFI,
4. Սեղանի թենիս, բիլիարդ:

---

* Փաթեթը չի բաժանվում ըստ օրերի և ծառայությունների: Ուշ ժամանելու կամ շուտ մեկնելու դեպքում, չօգտագործված օրերի գումարը հետ չի վերադարձվում:

** Անհրաժեշտ է ներկայացվել երեխայի ծննդյան վկայականի պատճեն: